ԿԴ/0078/01/10
(ՀԿԴ/0117/01/24)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 հոկտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԿԴ/0078/01/10 (ՀԿԴ/0117/01/24) քրեական վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով Աշոտ Հարությունի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 309-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝

8 (ութ) տարի ժամկետով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Մորես Արծրունու Հայրապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

Նույն դատավճռով Գարիկ Արամի Դավթյանը և Գագիկ Վլադիմիրի Ղազարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով արդարացվել են և ճանաչվել անմեղ:

1.1. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի հունիսի 15-ի որոշմամբ մեղադրողներ Կ.Փիլոյանի և Հ.Հարությունյանի, տուժողի իրավահաջորդ ********** ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի, ամբաստանյալ Ա.Հարությունյանի, վերջինիս պաշտպան Ս.Սաֆարյանի, ամբաստանյալ Մ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքները մերժվել են և Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ Ազգային Ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Մորես Հայրապետյանն ազատվել է պատժից, իսկ 8-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Աշոտ Հարությունյանի նկատմամբ նշանակված հիմնական պատժի չկրած մասը կրճատվել է մեկ երրորդով:

1.2. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքները վերադարձվել են:

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2022 թվականի նոյեմբերի 8-ին վճիռ է կայացրել, որով արձանագրել է «Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների նյութաիրավական և ընթացակարգային հայեցակետերի խախտումներ:

2.1. Բացառիկ վերանայման արդյունքում, ՀՀ Վճռաբեկ դատարանը 2024 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ բեկանել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի հունիսի 15-ի որոշումը և թիվ ԿԴ/0078/01/10 վարույթը փոխանցել է Հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

3. Թիվ ՀԿԴ/0117/01/24 (ԿԴ/0078/01/10) քրեական վարույթը Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է 2024 թվականի հունիսի 17-ին:

Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Վ.Ստեփանյան) 2024 թվականի հունիսի 20-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0117/01/24 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3.1. Հանրային մեղադրողի՝ 2025 թվականի հունիսի 4-ի որոշումներով մեղադրյալներ Մորես Հայրապետյանին, Գագիկ Ղազարյանին և Գարիկ Դավթյանին վերագրվող արարքների իրավական գնահատականները փոխվել են և վերջիններիս նոր մեղադրանքներ են ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով:

4. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 1-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0117/01/24 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

5. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Հարությունյան) 2025 թվականի սեպտեմբերի 23-ին որոշում է կայացրել թիվ ԿԴ/0078/01/10 (ՀԿԴ/0117/01/24) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

6. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հոկտեմբերի 2-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. Աշոտ Հարությունյանին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«(…) [Հ]անդիսանալով պաշտոնատար անձ, ակնհայտ դուրս գալով պաշտոնեական լիազորությունների շրջանակից, բռնություն է գործադրել բերման ենթարկված անձի նկատմամբ, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ.*

Այսպես.

*Աշոտ Հարությունյանը, հանդիսանալով ՀՀ ոստիկանության Զարենցավանի բաժնի քրեական հետաքննության բաժանմունքի պետ, իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, ակնհայտորեն դուրս գալով իր պաշտոնեական լիազորությունների շրջանակից, այն է՝ 2010 թվականի ապրիլի 13-ին՝ ժամը 10-ի սահմաններում, ոստիկանության բաժնի աշխատակիցներին հանձնարարել է ՀՀ ոստիկանության Զարենցավանի բաժին բերման ենթարկել գողություն կատարելու մեջ կասկածվող ******* **********, որից հետո, չպարզելով բերման ենթարկվածի առաղջական վիճակը՝ այն, որ ***** ********** տառապում է ********* **********, ********** ********** և ունի ինքնավնասումներ կատարելու հակում, իր աշխատասենյակում վերջինիս նկատմամբ բռնություն կիրառելու սպառնալիքով ստիպել է ընդունել գողություն կատարելու մեջ նրա մասնակցությունը:*

***** ******** չի ընդունել հանցանք կատարելու հանգամանքը, որի պատճառով Աշոտ Հարությունյանը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-30 հոդվածներով սահմանված ֆիզիկական ուժ կիրառելու հիմքերի բացակայության պայմաններում վերջինիս նկատմամբ բռնություն է գործադրել՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցրել ****** ********* մարմնի տարբեր մասերին:*

*Այնուհետև, նույն օրը՝ ժամը 17-ի սահմաններում, շարունակելով իր հանցավոր գործողությունները, Աշոտ Հարությունյանը ՀՀ ոստիկանության բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետի աշխատասենյակում, նույն նպատակով, քրեական հետաքննության բաժանմունքի մի խումբ աշխատակիցների ներկայությամբ շարունակել է ********* ********** նկատմամբ բռնություն գործադրել՝ կրկին ծեծի ենթարկել, իսկ գողության կատարմանը մասնակից լինելու*

փաստը չընդունելու դեպքում սպառնացել է ազատազրկման վայրում նրա վերաբերյալ անպատվաբեր լուրեր տարածել:

*Վերը նշված բռնությունների ժամանակ Աշոտ Հարությունյանը ******* ********* պատճառել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, այն է՝ քերծվածքներ քթի հիմի շրջանում, աջ սրունքի միջին երրորդի առաջային մակերեսին, աջ ծնկափոսային շրջանում, աջ սրունք-թաթային հոդի շրջանի ներսային մակերեսին, ձախ սրունքի վերին երրորդի առաջադրսային մակերեսին, ձախ սրունքի միջին երրորդի առաջային մակերեսին՝ շուրջը արյունազեղմամբ, արյունազեղումներ՝ գլխի մաշկի տակ գագաթային շրջանում, վերին շրթունքի լորձաթաղանթի տակ՝ բերանի ձախ անկյան շրջանում, ձախից ստորկզակային շրջանում:*

*Նշված գործողությունների հետևանքով ******* *********, գտնվելով հոգեկան խիստ լարված վիճակում, նույն աշխատասենյակի պահարանից վերցրել է խոհանոցային դանակը և որովայնի շրջանում իրեն վնասվածքներ հասցնելով՝ ինքնասպան եղել (...)»[1]:*

7.1. Մորես Հայրապետյանին նոր մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«(...) [Հ]անդիսանալով իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, օժանդակել է ՀՀ ոստիկանության Զարենցավանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանին իր պաշտոնեական լիազորությունների շրջանակից ակնհայտ դուրս գալով բռնություն գործադրելու բերման ենթարկված ***** ********* նկատմամբ, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:*

Այսպես.

Աշոտ Հարությունյանը, հանդիսանալով ՀՀ ոստիկանության Զարենցավանի բաժնի հետախուզության բաժանմունքի պետ, իշխանության ներկայացուցչի քրեական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, ակնհայտորեն դուրս գալով իր պաշտոնեական լիազորությունների շրջանակից, այն է՝ 2010 թվականի

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 269-271:

*ապրիլի 13-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, ոստիկանության բաժնի աշխատակիցներին հանձնարարել է ՀՀ ոստիկանության Զարենցավանի բաժին բերման ենթարկել գողություն կատարելու մեջ կասկածվող ******* **********, որից հետո, չպարզելով բերման ենթարկվածի առաղջական վիճակը՝ այն, որ ***** ********** տառապում է ****** **********, ********** ********** և ունի ********** ********** հակում, իր աշխատասենյակում վերջինիս նկատմամբ բռնություն կիրառելու սպառնալիքով ստիպել է ընդունել գողություն կատարելու մեջ նրա մասնակցությունը: ***** ******** չի ընդունել հանցանք կատարելու հանգամանքը, որի պատճառով Աշոտ Հարությունյանը՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-30-րդ հոդվածներով սահմանված ֆիզիկական ուժ կիրառելու հիմքերի բացակայության պայմաններում վերջինիս նկատմամբ բռնություն է գործադրել՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցրել ******* ********** մարմնի տարբեր մասերին: Այնուհետև, նույն օրը՝ ժամը 17:00-ի սահմաններում, շարունակելով իր հանցավոր գործողությունները, Գագիկ Ղազարյանի, Մորես Հայրապետյանի և Գարիկ Դավթյանի ներկայությամբ և օժանդակությամբ, մասնավորապես Աշոտ Հարությունյանը գիտակցելով, որ իր ենթակաների ներկայությունը բավարար երաշխիք է հանդիսանում ***** ********** դիմադրությունը կոտրելու և իր հանցավոր գործողություններին որևէ կերպ չհակադարձելու համար ՀՀ ոստիկանության բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետի աշխատասենյակում, նույն նպատակով, շարունակել է ***** ********** նկատմամբ բռնություն գործադրել՝ կրկին ծեծի ենթարկել, իսկ գողության կատարմանը մասնակից լինելու փաստը չընդունելու դեպքում սպառնացել է ազատազրկման վայրում նրա վերաբերյալ անպատվաբեր լուրեր տարածել, իսկ ոստիկանության ծառայողներ Գագիկ Ղազարյանը, Մորես Հայրապետյանը և Գարիկ Դավթյանը, ոչ միայն չեն փորձել կանխել Աշոտ Հարությունյանի հանցավոր գործողությունները, այլ իրենց ներկայությամբ ամրապնդել են նրա դիտավորությունը հանցագործությունն անխոչընդոտ ավարտին հասցնելու համար:*

*Վերը նշված բռնությունների ժամանակ Աշոտ Հարությունյանը ***** ********** պատճառել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ*

*չպարունակող մարմնական վնասվածքներ, այն է՝ քերծվածքներ քթի հիմի շրջանում, աջ սրունքի միջին երրորդի առաջային մակերեսին, աջ ծնկափոսային շրջանում, աջ սրունք-թաթային հոդի շրջանի ներսային մակերեսին, ձախ սրունքի վերին երրորդի առաջադրսային մակերեսին, ձախ սրունքի միջին երրորդի առաջային մակերեսին՝ շուրջը արյունազեղմամբ, արյունազեղումներ՝ գլխի մաշկի տակ գագաթային շրջանում, վերին շրթունքի լորձաթաղանթի տակ՝ բերանի ձախ անկյան շրջանում, ձախից ստորկզակային շրջանում: Նշված գործողությունների հետևանքով ***** *********, գտնվելով հոգեկան խիստ լարված վիճակում, նույն աշխատասենյակի պահարանից վերցրել է խոհանոցային դանակը և որովայնի շրջանում իրեն վնասվածքներ հասցնելով՝ ինքնասպան եղել (...)»*[2]:

7.2. Նույնական փաստական հանգամանքներով նոր մեղադրանքներ են ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով նաև Գագիկ Ղազարյանին և Գարիկ Դավթյանին[3]:

8. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ի համաձայն՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու առերևույթ դեպքով քննվող վարույթները ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա չեն, եթե արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով):*

Վերոգրյալի համատեքստում Դատարանը փաստում է, որ թիվ ՀԿԴ/0117/01/24 քրեական գործով մեղադրյալներ Աշոտ Հարությունյանի, Գագիկ Ղազարյանի, Գարիկ Դավթյանի, Մորես Հայրապետյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու (մեղադրանք առաջադրելու) մասին որոշումների փաստական հիմքի համաձայն՝ վերջիններիս վերագրվող ենթադրյալ հանցանքները կատարվել են ոչ շահադիտական դրդումով և բռնության

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 13, թերթեր 152-161:
[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 13, թերթեր 166-175, 180-189:

գործադրմամբ, ուստի ՀՀ հակակոռուպցիոն դատարանը սույն քրեական գործով չի հանդիսանում օրենքի հիման վրա ստեղծված պատշաճ դատարան, և քրեական գործով վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ և 263-րդ հոդվածներով սահմանված կարգով առարկայական ընդդատությամբ պետք է փոխանցել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[4]*:*

9. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը նախ և առաջ հարկ է համարում անդրադառնալ ՄԻԵԴ-ի և ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կողմից արտահայտված դիրքորոշումներին: Այսպես. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Վճռով արձանագրել է գործի քննության ավարտին արված եզրակացությունների ոչ հավաստիությունը, նշելով, որ դրանք չեն հիմնավորվել որևէ օբյեկտիվ ապացույցով, ինչն իրենից ենթադրում է, որ գործով ներկայացված ապացույցներն, ինչպես առանձին, այնպես էլ ամբողջության մեջ, թերի են հետազոտվել, ուստի դրանց հիման վրա արված եզրակացությունները ևս թերի են և ոչ հավաստի: Արված դիտարկումներից էլ կարելի է եզրահանգել, որ այն ապացույցների ամբողջությունը, որոնց հաշվառմամբ 2025 թվականի հունիսի 1-ին նոր մեղադրանք է ներկայացվել սույն գործով մեղադրյալներին, լիարժեք չեն: Ինչ վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի եզրահանգումներին, ապա դրանցից ևս հետևում է, որ քրեական գործով քննությունը մանրակրկիտ և արդյունավետ չի եղել, ուստի որոշվել է ապացույցները ողջ ծավալով համակողմանի հետազոտման ենթարկելու համար գործը նոր քննության ուղարկել:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 388-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ սահմանում է, որ բողոքարկվող դատական ակտը վճռաբեկության կարգով բեկանվելու և վարույթն ստորադաս դատարան փոխանցելու դեպքում վարույթն իրականացվում է ընդհանուր հիմունքներով Վճռաբեկ դատարանի սահմանած ծավալով, իսկ քննարկվող գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն իր

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 14, թերթեր 146-153:

*որոշմամբ գործն ուղարկել է նոր քննության՝ ամբողջ ծավալով, ինչն իրենից ենթադրում է գործի քննություն և ապացույցների հետազոտում՝ ամբողջությամբ, ուստի նոր մեղադրանք ներկայացնելու համար Վճռաբեկ դատարանի որոշման ուժով պետք է իրականացվի ապացույցների ամբողջական և նոր հետազոտում: Մինչդեռ գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հակակոռուպցիոն դատարանում գործի քննության շրջանակներում, նախնական դատաքննությունների ընթացքում, արդեն իսկ կատարվել է մեղադրանքի փոփոխում՝ փոխվել է կատարված արարքի և ներկայացված մեղադրանքի իրավական գնահատականը՝ առանց Դատարանում ապացույցների հետազոտման, մինչդեռ արարքի իրավական գնահատականը փոփոխվել է արդեն իսկ առկա դեռևս չհետազոտված ապացույցների հիման վրա: Դատարանը գտնում է, որ նման պայմաններում փոփոխված մեղադրանքի շրջանակներում փաստելով, որ ենթադրյալ հանցանքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, որևէ կերպ հիմնավորված չէ: Հարկ է ընդգծել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակներում դատարանն իրավասություն ունի նոր ի հայտ եկած փաստերի հիման վրա վարույթը որոշմամբ փոխանցել ըստ ընդդատության: Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի իրավակարգավորումները և համադրելով սույն գործի փաստական հանգամանքներին, Դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի փոփոխությունը, ինչի հիման վրա էլ Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի վերլուծությունների համատեքստում ընդունելի չէ: Այսպես. վերը նշված մեկնաբանություններով վերադաս ատյանը գործն ուղարկել է առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, հատկապես շեշտադրելով այն հանգամանքը, որ *.********** մահվան հետ կապված իրական հանգամանքները բացահայտված չէ, իսկ հանրային մեղադրողը դեռևս նախնական դատաքննության փուլում փոխել է մեղադրանքի իրավական գնահատականը, կրկին անգամ հաստատելով նախկինում մեղադրանքի մեջ նշված փաստական հանգամանքները և հաշվի չառնելով այդ հանգամանքները հաստատելու համար*

բավարար ապացույցների հետազոտման անհրաժեշտությունը, ինչը և հիմք է ընդունվել դատարանի կողմից և որոշում կայացվել գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին: Այլ կերպ՝ հանրային մեղադրողի կողմից 2025 թվականի հունիսի 4-ին կայացված մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը փոխելու և նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումների մեջ կրկին անգամ ներկայացվել են այնպիսի փաստական հանգամանքներ և դրանց հիման վրա տրվել են իրավական գնահատականներ, որոնք ի սկզբանե կասկածի տակ են դրվել թե՛ ՄԻԵԴ-ի, թե՛ ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կողմից: Անդրադառնալով Հակակոռուպցիոն դատարանի կողմից քրեական գործի առարկայական ընդդատությունը փոխելու մասին որոշման փաստարկներին, հարկ է արձանագրել, որ դրա հիմքում դրվել է բացառապես հանրային մեղադրողի կողմից կայացված որոշումը, և հիմնավորվել հետևյալ կերպ՝ «Վերոգրյալի համատեքստում Դատարանը փաստում է, որ թիվ ՀԿԴ/0117/01/24 քրեական գործով մեղադրյալներ Աշոտ Հարությունյանի, Գագիկ Ղազարյանի, Գարիկ Դավթյանի, Մորես Հայրապետյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու (մեղադրանք առաջադրելու) մասին որոշումների փաստական հիմքի համաձայն՝ վերջիններիս վերագրվող ենթադրյալ հանցանքները կատարվել են ոչ շահադիտական դրդումով և բռնության գործադրմամբ, (…)», ինչն իրենից ենթադրում է, որ հիմք է ընդունել հանրային մեղադրողի կողմից կայացված որոշումը՝ ինչն էլ իր հերթին կայացվել է առանց ապացույցների հետազոտման, որպիսի հանգամանքը Դատարանին հիմք է տալիս եզրահանգելու, որ մեղադրանքի փոփոխելը հանրային մեղադրողի կողմից սույն փուլում ոչ իրավաչափ է:

Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածը հստակ նախատեսում է գործն ըստ ընդդատության ուղարկելու ընթացակարգը, մասնավորապես, նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության, իսկ քննարկվող քրեական գործի շրջանակներում գործը դատարանի վարույթում է գտնվել շուրջ մեկ տարի երեք ամիս, իսկ այդ ժամանակահատվածում դատարանը նշանակել է դատական նիստեր, քննարկել ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հարցեր և 2025 թվականի հունիսի 4-ին հանրային մեղադրողի կողմից կայացված որոշումը ստանալուց հետո որոշում է կայացրել գործն ըստ ընդդատության փոխանցելու մասին, ինչն ըստ Դատարանի հակասում է օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումներին:

Հարկ է արձանագրել նաև, որ հանրային մեղադրողը մեղադրանքի իրավական գնահատականը փոփոխել է նախնական դատաքննության փուլում, առանց ապացույցների հետազոտման, իսկ նոր մեղադրանքը Հակակոռուպցիոն դատարանի կողմից նախնական դատաքննության փուլում ընդունվել է և առանց քննարկման առարկա դարձնելու մեղադրանքի փոփոխման համար հիմք հանդիսացած հանգամանքները, բացառապես արարքների իրավական գնահատականը փոխելու արդյունքում՝ որոշում է կայացվել գործն ըստ ընդդատության փոխանցելու մասին:

Անդրադառնալով դատաքննության փուլում մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը փոխելու՝ դատախազի լիազորությունների շրջանակին, Դատարանն արձանագրում է, որ այն նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համաձայն որի՝ դատախազն իրավունք ունի ապացույցների հետազոտման արդյունքում փոխելու մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը: Օրենսդիրը որպես ապացույցների հետազոտման փուլ նախատեսել է հիմնական դատաքննության փուլը, հետևաբար դատախազի այս լիազորության իրացման համար որպես իմպերատիվ պահանջ նախատեսված է ապացույցների հետազոտումը: Այսպիսով, Դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ հանրային մեղադրողի կողմից կայացված որոշման հիման վրա Հակակոռուպցիոն դատարանի՝ քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշումը, հատկապես հաշվի առնելով քրեական վարույթի բեկանված լինելու և ապացույցներն ամբողջությամբ և նորովի հետազոտելու անհրաժեշտությունը:

(…)

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 6-ի համաձայն՝ թե՛ 308-րդ և թե՛ 309-րդ հոդվածներով սահմանված հանցանքները կոռուպցիոն բնույթի հանցանքներ են, ինչի հաշվառմամբ էլ ՀՀ

վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը 2024 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով վերանայել է և բեկանել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշումը՝ գործի վարույթը փոխանցելով ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքով, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի թե՛ 308-րդ և թե՛ 309-րդ հոդվածներով նախատեսված հանցանքները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածին:

Համաձայն գործող ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված N 1-ի, ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով նախատեսված հանցանքները (Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը (բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)) կոռուպցիոն բնույթի հանցանքներ են: Դատարանը հարկ է համարում նշել նաև, որ վերոնշված բացառությունները՝ ներառվել են ՀՀ քրեական օրենսգրքում 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքով, ինչից հետևում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կողմից 2024 թվականի ապրիլի 16-ի որոշումը կայացվել է վերոնշյալ փոփոխություններն արդեն իսկ կատարված լինելու պայմաններում, որպիսի հանգամանքով պայմանավորված թիվ ՀԿԴ/0117/01/24 դատական գործը փոխանցվել է Հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

Հարկ է նաև նշել, որ սույն գործով մեղադրյալներին մեղսագրվող արարքները ընդգրկված են 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 6-ով սահմանված կոռուպցիոն բնույթի հանցանքների շարքին, որը Դատարանին թույլ է տալիս ենթադրել, որ Հակակոռուպցիոն դատարանը գործի քննությունը իրականացրել է կամ պետք է իրականացնի առաջադրված մեղադրանքի սահմաններում, ինչն, ըստ էության, իր մեջ ներառում է սույն քրեական

գործով ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող հանգամանքները:

Ամփոփելով վերոնշյալը Դատարանը գտնում է, որ թիվ ԿԴ/0078/01/10 քրեական գործն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին (…)»[5]*:*

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

10. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԿԴ/0078/01/10 (ՀԿԴ/0117/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

11. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

12.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[6]*:*

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական*

---

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 15, թերթեր 3-13:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[7]*:*

13. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[8]:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների

---

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14.1. ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» հավելված N 1-ի համաձայն՝ *«Հոդված 441. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը (բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)»:*

14.2. Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածը (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածին) չի համարվում կոռուպցիոն բնույթի հանցանք՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, երբ արարքը կատարվել է՝ ա) ոչ շահադիտական դրդումներից ելնելով, բ) բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ մեղադրյալներ Ա.Հարությունյանին, Գ.Ղազարյանին, Գ.Դավթյանին և Մ.Հայրապետյանին ներկայացված մեղադրանքների համաձայն՝ վերջիններիս վերագրվող ենթադրյալ հանցանքները կատարվել են ոչ շահադիտական դրդումով և բռնություն գործադրելով, գտել է, որ քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության պետք է փոխանցել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[9]:

---

[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Հակակոռուպցիոն դատարանի՝ քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշմանը, գտնելով, որ հանրային մեղադրողի կողմից նախնական դատալսումների փուլում մեղադրյալներ Մ.Հայրապետյանին, Գ.Ղազարյանին և Գ.Դավթյանին վերագրվող արարքների իրավական գնահատականը փոխելը եղել է ոչ իրավաչափ[10]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների բովանդակությունից պարզ է դառնում, որ Ա.Հարությունյանը, ենթադրաբար **ոչ շահադիտական դրդումներից ելնելով բռնություն է գործադրել** բերման ենթարկված անձի նկատմամբ, իսկ Մ.Հայրապետյանը, Գ.Դավթյանը և Գ.Ղազարյանը ենթադրաբար օժանդակել են նրան: Նման պայմաններում, գտնում ենք, որ մեղադրյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով վերագրված հանցանքներն ընդգրկված չեն «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածում և չեն հանդիսանում կոռուպցիոն հանցանքներ, հետևաբար, առկա չէ սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը:

17. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է մեղադրանքը փոփոխելու՝ հանրային մեղադրողի միջնորդությունը և վարույթը շարունակել մեղադրյալներին ներկայացված նոր մեղադրանքներով, գտնում ենք, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթի ընդդատության հարցի քննարկման շրջանակներում իրավասու չէր գնահատական տալու հանրային մեղադրողի կողմից մեղադրանքները փոփոխելու իրավաչափությանը, որի գնահատումը դուրս է նաև սույն վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ վեճի լուծման ընթացքում քննարկման ենթակա հարցերի շրջանակից:

---

[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

18. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԿԴ/0078/01/10 (ՀԿԴ/0117/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

19. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԿԴ/0078/01/10 (ՀԿԴ/0117/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Աշոտ Հարությունի Հարությունյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով, Մորես Արծրունու Հայրապետյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով, Գարիկ Արամի Դավթյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով, Գագիկ Վլադիմիրի Ղազարյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ ԿԴ/0078/01/10 (ՀԿԴ/0117/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ